ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

N⁰ 1738

«10» 12 2013թ.

ք.Երևան, Բաբայան 6
Հեռ. 077-25-54-74

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

ք.Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59

ՊԱՏՃԵՆԸ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՆՅԱՅԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

ք.Գյումրի Անի թաղամաս 7-րդ փողոց շենք 3 բն.5

Հայտնում եմ, որ Անդրանիկ Ներսիսյանի դիմումի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով, ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնում 2013 թվականի դեկտեմբերի 7-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին:

Միաժամանակ ուղարկում եմ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը:

Առդիր որոշումը՝ <<1>> թերթ.

Հարգանքով.

ՀԿԳ ՔՆՆԻՉ ***Ա.Մ.ԺԱՄԿՈՉՅԱՆ***

90154213

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07.12.2013թ. ք.Երևան

ՀՀ ՊՆ հատկապես կարևոր գործերի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա.Մ.Ժամկոչյանս, քննարկելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլիայի Վանաձորի գրասենյակից ստացված հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Գյումրի քաղաքի բնակիչ Անդրանիկ Ներսիսյանի դիմումի հիման վրա, 2013թ. նոյեմբերի 25-ին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին այն մասին, որ Գյումրու զինկոմիսարիատի նախազորակոչային հանձնաժողովը ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելով, պատշաճ բժշկական հետազոտության չի ենթարկել նույն քաղաքի բնակիչ Ռուբեն Անդրանիկի Ներսիսյանին և 2012թ. հունիսի 25-ին նշված զինկոմիսարիատից նրան զորակոչել են ՀՀ զինված ուժեր: Ծառայության ընթացքում Ռուբեն Ներսիսյանի մոտ զարգացել է չարորակ ուռուցք՝ «Ռադիկալ օրխոֆունիկուլէկտոմիա» ծանր հիվանդությունը, որի պատճառով նա ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2012թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայությանը խաղաղ ժամանակ ու զորացրվել պահեստազոր:

Նկատի ունենալով, որ նյութերում առկա են ծանր հետևանքներ առաջացրած զինվորական ծառայության կրման սահմանված կարգի խախտման՝ ՀՀ քր. օր-ի 376-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, իսկ ՀՀ քր. դատ. օր-ի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր քրեական գործերով նախաքննությունը պարտադիր է, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 27, 55, 175, 176, 178, 182, 188 և 192 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն նյութերով հարուցել քրեական գործ՝ ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշով, որին շնորհել **90154213** հերթական համարը:
2. Քրեական գործն ընդունել վարույթ և կատարել նախաքննություն:
3. Որոշման մեկ օրինակն ուղարկել Հելսինկյան քաղաքացիական ասամբլիայի Վանաձորի գրասենյակ և Անդրանիկ Ներսիսյանին:
4. Որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՀ կենտրոնական զինվորական դատախազություն:

ՀԿԳ ՔՆՆԻՉ **Ա.Մ.ԺԱՄԿՈՉՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Որոշման օրինակը ՀՀ կենտրոնական զինվորական դատախազություն է ուղարկվել 07.12.2013թ.:

ՀԿԳ ՔՆՆԻՉ **Ա.Մ.ԺԱՄԿՈՉՅԱՆ**